

կայր յանապատ տեղիս. մինչեւ ազդ լինէր իրաց ինչ աւգտակարաց եկեղեցականաց ի կողմանս յաշակերտեալսն:

65 Յայնժամ իջանէր յաւգնականութիւն եւ վճարէր զպէտս պիտայից, ուր հոգեւոր կարգաց էր նուագութիւն, շնորհաւքն Զրիստոսի. եւ յորդորագոյնս եւ պարարտագոյնս անփակ բերանով եւ հանճարով իմաստութեամբ զվտակս վարդապետութեանն ի սիրտս սերմանելեացն ծաւալեցուցանէր եւ զայս առնէր զամենայն ժամանակս իւր երանելի վարդապետն Յայոց Մեսրոպ: 66 Զանգի սովոր իսկ եւն ճշմարիտ վարդապետք զանձանց առաքինութիւն կանովն աշակերտացն առնել. որպէս զԶրիստոսի եւ Աստուծոյ մերոյ Է ուսուցանել ըստ տնաւրէնութեանն. քանզի Սկսաւ, ասէ Յիսուս առնել եւ ուսուցանել, եւ եթէ, հայեցարուք յառաջնորդն հաւատոց եւ ի կատարիչն Յիսուս, որ փոխանակ ուրախութեանն որ առաջի կայր՝ յանձն էառ զխաչն, արհամարիեաց զամաւթ, եւ զինչ այր վշտաց հատուցումն ցուցանի հաւատացեալ ի Զրիստոս Յիսուս: 67 Նստաւ, ասէ, ընդ աջմէ մեծութեանն ի բարձունս. աղէ ածեք զմտաւ որ այսպիսի համբերութիւն վասն մեր կրեաց, զի մի աշխատ լինիցիմք եւ լքանիցիմք ի վարս առաքինութեան: 68 Չի ոչ վասն անձին ամենատերն զայս առնէր, այլ վասն համաշխարհական փրկութեանն, յուսումն աստուածասիրաց որ ընդ վասն նոյն ճանապարհորդէն ի հանդերձեալսն, որ եւն աւրինակ ամենայն հաւատացելոց ի Զրիստոս, որպէս ճառք Աւետարանին քարոզեն:

69 Իսկ արդ եթէ ի թերթեագոյն արուեստաւոր եւ հանճարեղ իմաստից տգիտանամք, որ ընդ աստուածախաւսսն կատարէ զշնորհացն ներգործութիւնն, որում երանելին Պաւղոս ամենեցուն տգիտանալ ասէ, այդ եւ յուշ առնէ զառաջնորդս կենաց բանին. Յայեցեալք, ասէ, յելս գնացից նոցա նմանողք եղերուք, եւ յուսմունս պէսպէս եւ յաւտարածայնս մի դանդաչէք, այդ առաքելոց եւ մարգարէից եւ երանեալ սրբոց հարցն հետեւեալ ճշմարտութեանն աւանդից զոր նոքայն հորդեցին զանսայթաք ճանապարհն յերկնից արքայութիւնն. եւ աւրինակ աշակերտելոցն զհաւատս եւ զվարս բայցայայտեցին գրովք սրբովք. երբեմն առանձինն խրատատելով ըստ իւրաքանչիւրոցն աւգտի, երբեմն ի ժողովս բազմամբոյս զփառս Զրիստոսի շնորհաւք եւ մարդասիրութեամբ Տեառն բարձրացուցանէին, եւ յամենայն աշխարհակիր զբաւսանաց ի բաց կալ, եւ միայն աստուածաշտութեան պարապել. զոր եւ մարգարէքն եւ առաքեալքն յառաջագոյն գուշակեցին ըստ Պաւղոսի վկայութեանն: 70 Շրջեցան, ասէ, լաշկամաշկաւք եւ մորթովք այծենաւք, կարաւտեալք, նեղեալք, չարչարեալք, յանապատի մոլորեալք եւ յայրս եւ փապարս երկրի. եւ սոքա ամենեքեան վկայեալք ի հաւատոցն՝ ստուգեցին զարդարութեան ճանապարհն աշակերտելոցն, որ տանի ի կեանսն յաւիտենից: